

Կառա հայահնչիւն անունը, ըստ իրենց լեզուին տառադարձութեան կանոնին ի Քէֆէ փոխած են: Եթէ յանդգնութիւն չհամարին ընթերցողք, մեք այս անունն ևս, Քըըըմ անուան ձևով երկու մասն բաժանելով, այսպէս կառ ա, կ'ուզեմք մեկնել որ հայերէն կառ և ա (փոխանակ զի գրուած) բառին և տառին բարդութիւնն է այս անունն:

Կառ հայերէն կը նշանակէ հող, մանաւանդ բրուտի հող terre glaise. ա տառը, ինչպէս յայտնի է ամենայն հայագիտաց, ցայսօր Հայաստանի շատ գաւառաց մէջ, փոխանակ է օժանդակ բային տեղ կը գործածեն. օրինակի համար փոխանակ մարդ է ասելու, կ'ասեն մարդ ա. երախայ է = երեխէ ա. մեծ է = մեծ ա. փոքր է = փոքր ա և այլն. ուրեմն կառա ասելով՝ հայերէն պէտք է հասկնալ կառ է, կառեղէն է. ցայսօր ևս, եթէ մէկը Թէոդոսիոյ քաղքի երեք կողմէն պատած բլուրներուն վերայ նայի, մանաւանդ անձրևէ վերջ, իսկոյն նոյն բառերը պէտք է զրուցէ կառ է, կառեղէն են Թէոդոսիոյ շուրջը պատած բլուրները:

Եւ որովհետև յընթացս պատմութեան քաղաքիս տեսանք որ ի Ժ դարու, նախ քան զԳենուացիս ի ցամաք ելած են աստ ի Թէոդոսիա՝ հայկազունք և առաջին անգամ նոյն Ժ դարուն մէջ կը լսուի ի պատմութեան կաֆա անունը փոխանակ Թէոդոսիոյ, ուստի այս հանգամանքներէն կը հետևցընեմք, որ Հայք ելնելով ի ցամաք, Թէոդոսիոյ մէջ և հայելով Ալանաց և Գլթաց ապա և Հոնաց աւերակներուն վերայ տիրող բլուրներուն որ կը պատեն զԹէոդոսիա, և միանգամայն միտք բերելով, այդ հայ Անցի ժողովուրդը Շիրակայ գեղազուարճ դաշ-